**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՅԱՊՁԲ-10/3-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան**

27-ը **փետրվարի 2019թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Օստինատո» ՍՊԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Կ. Հարությունյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **22.11.2018թ.** կնքված № **ԳՅԱՊՁԲ-10/3-1** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին(այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

**2. Գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***22,453,200 (քսաներկու միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն***, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետով նախատեսված կարգով, բայց ոչ ուշ, քան 25.12.2019թ.:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչությունը:**

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| | |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | **«Օստինատո» ՍՊԸ** |
| ք. Երևան Բագրևանդի 5 | **Ք. Երևան, Գ-1 թաղ., 9/7** |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | **«Ինեկոբանկ» ՓԲԸ** |
| Հ/Հ 900011117034 | **Հ/Հ 2050622024161001** |
| ՀՎՀՀ 02522157 | **ՀՎՀՀ 01250759** |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | **տնօրեն** |
| **Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ** | **Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** |

"OSTINATO" 01250759

Հավելված N 1
N ԳՅԱՊՁԲ-10/3-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /դրամ/ | Ընդհանուր գումար /դրամ/ | Մատակարարումը՝ 2019թ. 1-ին եռամսյակ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ջրատար խողովակաշարեր Մետաղական խողովակ d=48 մմ | մ | 21,600 | 1,039.5 | 22,453,200 | 21,600 |

Հավելված N 2
N ԳՅԱՊՁԲ-10/3-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին/դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2019թ., համապատասխան ամիսների, այդ թվում` | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 25.12.19թ. |
| 1. | Ջրատար խողովակաշարեր Մետաղական խողովակ d=48 մմ | 44161130/503/10/9 | 22,453,200 | 22,453,200 | 22,453,200 | 22,453,200 | 22,453,200 | 22,453,200 | 22,453,200 | 22,453,200 | 22,453,200 | 22,453,200 | 22,453,200 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

**Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ**

**ՎԱՃԱՌՈՂ**

**«Օստինատո» ՍՊԸ**
տնօրեն

**Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**